№ 287 ՇԱԲԱԹ, 26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1909

ԵՐԵՍՈՒՆՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 287

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բայց կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տպարանի տելեֆօն № 228.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1910 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(38-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միևնոյն ժամանակ 40 կ. նամականիշ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով առեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։ Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխանր. բլանկի վրա ճախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редак ія «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կիրակի, դեկտեմբերի 27-ին, Մողնու ս. Գէորգ եկեղեցում կը կատարվի ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ հանգուցեալ

Միրզաջան Կարապետեան ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻ

մահվան տարեդարձի առիթով, որի մասին յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին հանգուցեալի այրին՝ Հռիփսիմէ Յարութիւնեան, եղբայրները՝ Ալէքսանդր և Աստուածատուր, եղբօրորդիք՝ Թէոդորոս, Արարատ և Սմբատ Խաչատրեանցները։ Պատարագի սկիզբն է ժամը 10½-ին, իսկ հոգեհանգիստը ժամը 12-ին։ 1389. 2—1

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. Խորհուրդը

յայտնելով, որ առաջիկայ Նոր-տարւայ եւ Ծննդեան տօների առիթով շնորհակալութեամբ ընդունում է աղքատների համար նուէրներ դրամով, մթերքներով և շորերով, ամենայն օր՝ ժամը 9-ից մինչև 2-ը և երեկ. 5-ից մինչև 7-ը՝ Ընկերութեան գրասենեակում (Абасъ-Абадская пл. № 7, с. д.), խոնարհաբար խնդրում է բարեսիրտ անձնորներին օգնութեան հասնել թշուառներին։

(շ. չ.) (առ.) 1390. 2—1

Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան դահլիճում
կիրակի, դեկտեմբերի 27-ին, երեկոյեան ժամը 7-ին,
կայանալու է

Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական եւ Տնայնագործ. Ընկերութեան

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՆԻՍՏԸ

ԶԱՐԱԳՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

1. Վարչութեան և վերջին ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը։
2. «Գիւղատնտեսական գիտելիքների տարածման եղանակները»—զեկուցում Ալ. Քալանթարի։
3. «Սերմացուի նշանակութիւնը երկրագործութեան մէջ»—զեկուցում Ա. Աթանասեանի։
4. «Բամբակագործութեան պայմանները Անդրկովկասում»—զեկուցում Կ. Մելիք-Շահնազարեանի։
5. «Թռչնաբուծութեան պահանջները»—զեկուցում Կ. Աֆրիկեանի։
6. «Կովկ. ծխախոտագործութիւն»—զեկուցում Տ. Էնֆիաճեանի։
7. «Գինի՞ թէ՞ խաղող»—զեկուցում Գ. Խարազեանի։
8. «Կաթի մատակարարութիւնը»—զեկուցում Յ. Մելիք-Բախտամեանի։
9. «Կաթնատնտեսական ձեռնարկութիւններ»—զեկուցում Գ. Շաղինեանի։
10. «Մեղուաբուծութեան կարիքները մեր երկրում»—զեկ. Ա. Մխիթարեանի։
11. «Թաչնապահութեան դերը»—զեկուցում Օ. Նշանեանի։

Զեկուցումներից մի քանիսի առիթով ցոյց կը տրվեն՝ գործիքներ, մօդելներ, հում մթերքներ, նկարներ և այլն։

(ա. օ.) (առ.) 1388. 3—2

Յօգուտ Թիֆլիսի Հայ Գիւղատն. եւ Տնայնագործական Ընկերութեան

Շաբաթ, 26 դեկտեմբերի

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԴԱՀԼԻՃՈՒՄ

կը կայանայ

ՄԵԾ

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Հետևեալ ծրագրով

- I Երկու սեռի մանուկների համերգ։
- II Թատրոն սինեմատօգրաֆ՝ մանկական ռեպերտուարով։
- III Գլատիքական մարմնամարզութիւն՝ յատուկ հագուստներով։
- IV Մանկական խաղեր՝ երգերով։

—

Վիճակախաղ՝ հասակաւորների համար, երաժշտութիւն, ծաղիկներ, մանկական շքեղ գնացք, բուֆէտ, ծաղիկներ և զինւորական երաժշտութիւն։

Տոմսակները թէ հասակաւորների և թէ երեխաների համար 1 ր. 10 կ.։

Սկիզբն է երեկոյեան ժամը 6-ին։

(ա. օ.) (առ.) 1365. 6—6

Շաբաթ, դեկտեմբերի 26-ին, առաւօտեան ժամը 10-ին Թամամշեան դպրոցում
կայանալու է

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Օրակարգ. 1) Նախահաշիւ 1910 թ. («Նոր Դպրոց» մի կամ երկշաբաթաթերթ դարձնելու խնդիրը), 2) փոխ.-խնայող. գանձ. կանոնադր., 3) մի փոխանդամի ընտրութիւն։ Չը կայանալու դէպքում երկրորդ ժողովը տեղի կունենայ երկուշաբթի, դեկտեմբերի 28-ին, առաւօտեան ժամը 10-ին նոյն տեղը։

(հ. շ.) (առ.) 1384. 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, դեկտեմբերի 27-ին
կը կայանայ

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

էլեկտրական տօնածառով

I

Մանկական համերգ

II

Սինեմատօգրաֆ

III

Մանկական շքեղ գնացք դրօշակներով և երգերով։

IV

ՊԱՐԵՐ

Կը նուագի լարանուագների խումբը։ Սկիզբն է երեկ. ժ. 5-ին, վերջը՝ ժ. 9-ին։ Մուտքը, ինչպէս անդամների, նոյնպէս և ոչ անդամների երեխաների համար 30 կ., մեծերինը—50 կ.։

Հարկաւոր կարգապահութիւնը պահպանելու նպատակով՝ երեխաների տոմսակների թիւը սահմանափակված է։

Սովորական ընտանեկան երեկոյթը կը կայանայ մանկական երեկոյթից յետոյ։

(ու. շ. կ.) (առ.) 1386. 3—2

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Կան մի շարք տարիներ, որոնք համարեա նման են միմեանց և այդպիսիները մենք շատ ենք տեսել անցեալում. բայց կան և այնպիսիները, որոնցից իւրաքանչիւրը միանգամից շատ տարիների ներքին արժէք ունի։

Անցողական շրջաններում այդպէս են լինում տարիները։

Յիշատակելի 1905 և մասամբ 1906 թւականները դարագլուխների բնաւորութիւն էին կրում։

Յետագայ 1907, 1908 և ներկայ 1909 թւականները այլ ևս չունէին այն ջղային խիստ գալարումները, ինչ նախորդ երկու տարիները, բայց սրանք յամենայն դէպս դեռ շատ հեռու էին սովորական տարիներ լինելուց և կրում էին իրանց վրա անցողական շրջանի գունաւոր դրօշմը։

Ներկայ 1909 թւականը դեռ զբաղված էր հասարակական, տնտեսական և քաղաքական դիրքերի դասաւորման, զանազան կուլտուրական ծրագիրների վերաստուգութեան, գործող համախմբումների հեղինակութեան խնդիրներով։

Այո, որոշվում էին դիրքերը, վերաքննվում էին ծրագիրները, քուէի էին ենթարկվում հեղինակութիւնները։

— Իրականութիւնը մեզ խաբեց,— ասում են մի հայեացքի տէր անձեր,— նա խորտակեց մեր ծրագիրները։

— Ոչ, իրականութիւնը մեզ զգաստացրեց և արթնացրեց,— պնդում են միւսները։

Վէճը չէ վերջացած. նա շարունակվում է զանազան տեղերում, թէև ոչ նախկին սրութեամբ և ջերմութեամբ։

— Իդէալները և ծրագիրները լաւ էին ձևակերպված, բայց իրագործողները անպատրաստ էին,— ասում էին մի տեսակ մտածողները։

— Ոչ, նրանք սխալ էին ձևակերպված և պէտք է անաջողութեան հանդիպէին, ովքեր էլ լինէին նրանց իրագործողները,— նկատում էին միւսները։

Դարձեալ քննութեան են ենթարկվում առաւելագոյն և նուազագոյն ծրագիրների—մաքսիմումի և մինիմումի—պահանջները։

— Ամենևին խօսք չը պէտք է լինէր առաւելագոյն պահանջի կամ մաքսիմումի մասին,— ասում են մի կողմի մարդիկ։

— Ոչ, անհրաժեշտ է հանդէս դնել վերջնական նպատակակէտի, հեռաւոր իդէալի փարոսը, որպէսզի որոշ լինեն հոսանքները,— առարկում են միւսները։

Բայց կեանքի մէջ չափազանց արդէն թուլացել է առաւելագոյն պահանջների արտայայտութիւնը և նոյնիսկ կասկածի են ենթարկվում այն ծրագիրների իրագործութեան յոյսերը, որոնք հանդէս էին մտված իբրև նուազագոյն պահանջներ։

Եւ որ բնորոշն է՝ շատ դէպքերում տեղատւութիւնը կամ յետադարձ տրամադրութիւնը տիրացել է նաև այն շրջաններում, որոնք աւելի ահագին կերպով են արտայայտում արմատական փոփոխութիւնների պահանջները։

Եւ զարմանալի չէ, եթէ մենք ականատես ենք մի երևոյթի, որ ծայրայեղ ձախակողմեան ձգտումների թափով բարձունք որոնող տարրերը անկարող են հասնել կատարի բարձրութեան, չը գտնելով բաւականաչափ կորով իրանց մէջ և յենակէտ իրականութեան խաւերում։

Եթէ յեղափոխական շարժումը կոչված էր վերագնահատել եղած արժէքները և ցոյց տալ, թէ ինչն է վերջնականապէս մաշված կամ վարկաբեկված և ինչն է կրում փրկութեան ոգի ու էութիւն իր մէջ, նա ինքը անցողական շրջանում նոյնպէս ենթարկվում է վերագնահատութեան, որը և պէտք է պարզի, թէ ինչն էր այդ շարժման մէջ առողջ, կենսունակ ու փրկարար և ինչը հիւանդոտ երևոյթ ու քայքայիչ մի հանգամանք։

Հասարակական քննադատութեան համար դեռ վերապահված են մի շարք խնդիրներ, որոնք և պէտք է մտածութեան առարկայ դառնան առաջիկայում, և վերջացող տարին պիտի յանձնէ Նոր-տարուն դեռ չը վերջացած խոշոր խնդիրներ։

Ա. Քալանթար

ՄԵԾ ԻՇԽԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Պետերբուրգ, 24 դեկտեմբերի

Եկաւ սերբ զինւորական պատգամաւորութիւնը և Մեծ Իշխանի գերեզմանի վրա դրեց ծաղկեայ պսակ մակագրութեամբ՝ «Շնորհակալութեամբ սերբ զօրքից»։ (Հ. Գ.)

—

Թաւրիզ, 24 դեկտեմբերի

Մեծ Իշխան Միխայիլ Նիկօլայեվիչի թաղման օրը զօրամասի եկեղեցում ռուս պաշտօնական անձանց և ռուս գաղութի ներկայացուցիչների ներկայութեամբ կատարվեց մաղթանք։ (Հ.Գ.)

—

Ախալքալաք, 21 դեկտեմբերի

Ամսիս 20-ին, տեղիս հայոց եկեղեցում հ. եկ.-ծխ. երկսեռ դպրոցի անունից, զինւորական և քաղաքային բարձրաստիճան անձանց, հոծ բազմութեան, դպրոցի ուսուցիչ-ուսուցչուհիների և սաների ներկայութեամբ, հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ Մեծ Իշխան Միխայիլ Նիկօլայեվիչի յիշատակին։

Հոգեհանգստից յետոյ հոգաբարձութիւնը հանգուցեալ Մեծ Իշխանի որդի Նիկօլայ Միխայլովիչին այդ առիթով ուղղեց ցաւակցական հեռագիր։ Ռիսկ

—

Ալէքսանդրօպօլում հրատարակվող «Ախուրեան» թերթում կարդում ենք. «Ս. Փրկիչ եկեղեցում մեծ հանդիսաւորութեամբ կատարվեց հոգեհանգիստ հանգուցեալ Մեծ Իշխան Միխայիլ Նիկօլայեվիչի յիշատակին։ Ներկայ էին քաղաքիս բոլոր տարրական և միջնակարգ դպրոցների աշակերտ-աշակերտուհիները, ուսուցչական խմբերը և հոգաբարձական կազմերը։ Պատարագին երգում էր ս. Աստուածածին աւ. եկեղեցու քառաձայն խումբը»։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Լոնդօն, 24 դեկտեմբերի

Համայնքների պալատի առաջիկայ ընտրութիւնների առիթով ծովային լիգան մի կոչ հրատարակեց, որով յայտնում է, որ բրիտանական կառավարութեանը ծովի վրա վտանգ է սպառնում եւրօպական կօնտինէնտի ամենաուժեղ զինւորական մեծ պետութեան կողմից, որ ներկայումս կառուցանում է հսկայական ռազմական նաւատորմ. Անգլիան, լիգայի կարծիքով, պէտք է կառուցանէ Գերմանիայի ամեն մի նաւի դէմ երկուսը։ Լիգան իր կոչով յորդորվում է ընտրողներին ձայն տալ միայն նրանց, որոնք յանձն կառնեն պաշտպանել բրիտանական նաւատորմի հզօրութիւնը, որ անհասանելի է միւս պետութիւններին։ (Հ. Գ.)

—

Մոսկվա.—Պահնորդական բաժանմունքի պետ ֆօն-Կոտտէնի փոխարէն, որ փոխադրվեց Պետերբուրգ հանգուցեալ Կարպօվի տեղը, նշանակվեց Վարշավայի պահնորդական բաժանմունքի կառավարիչ գնդապետ Զավարզինը, որ սկզբում նոյն պաշտօնը վարում էր Ռօստովում։ («Б.»)

—

Իրբիտ.—Բացվում են օդագնացութեան դասընթացքներ։ («Б.»)

—

Խարկով.—Նահանգական զեմստվային վարչութեան մէջ կատարվեց մանրազննին խուզարկութիւն։ («Б.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Թաւրիզ, 24 դեկտեմբերի

Ռահիմ խանը ստիպեց Եփրեմին յետ նահանջել Սերաբ իր զօրախմբով։ (Հ. Գ.)

—

Թեհրան, 24 դեկտեմբերի

Գիլանի նահանգապետ նշանակվեց Մագաիր-ուլ-Մէմալիքը, որ սկզբում ոչ մի տեղ չէ ծառայել։ Նոր նահանգապետը գնալու է Ռաշտ նոր զօրամասի գլուխ անցած։

Կառավարութիւնը պաշտօնապէս արգելեց 1910 թւի յունվարի 1-ից այլևս Պարսկաստանից չարտահանել անխնամ զարդարված գորգեր։ (Հ. Գ.)

—

Թեհրանից հեռագրում են, որ, այնտեղ պտտող լուրերի համեմատ, Ռուսաստանը մտադրութիւն ունի իր Պարսկաստան ուղարկած արշաւախմբերի ծախսերը պահանջել Պարսկաստանից, նոյնպէս և ռուս հպատակների այն վնասները, որ նրանք կրել են Պարսկաստանում տեղի ունեցած անկարգութիւններից։ («Б. В.»)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Կ. Պօլիս.—Կաբինէտի ազդեցիկ անդամներից մինը յայտնեց «Русское Слово»-ի թղթակցին Հիլմի փաշայի անկման պատճառները. երիտասարդ-թիւրքերի կօմիտէտը դժգոհ մնաց այն վճռից, որ կայացրեց կաբինէտը Տիգրիս և Եփրատ գետերի նաւագնացութեան կօնցեսիաների հարցի առիթով. դժգոհութեան երկրորդ հիմք ծառայեց Ադանայում 36 մահմեդական-ջարդարարների մահվան պատիժը, մինչդեռ դատապարտված հայերը ներումն ստացան. երրորդ պատճառն այն է, որ չափազանց խիստ կերպով գործադրվեց Մակեդօնիայում հրոսակախմբերին վերաբերող օրէնքը։

Սակայն փոփոխութիւնը չի ազդի արտաքին քաղաքականութեան վրա։

Հակկը-բէյը հարկադրված կը լինի լուրջ կերպով հաշւի առնել երիտասարդ-թիւրքերի կօմիտէտին, որի մէջ գերակշռում է ռուսասէր-փոքրամասնութիւն կազմող հոսանքը, որ ձգտում է իրականացնել բալկանեան ֆեդերացիան և մերձենալ Ռուսաստանին. երկրորդ հոսանքը գերմանասէր, որ ձգտում է դաշն կապել Գերմանիայի և Աւստրիայի հետ։

Մերձաւոր Արևելքում հրատարակվող գերմանական լրագիրները ռուսական շարժական ցուցահանդէսը վարկաբեկելու նպատակով հաղորդում են, երբ էկսպօնատների մեծ մասը գնված է Գերմանիայում և Աւստրիայում։ Կ. Պօլսի փողոցներով բազմաթիւ առևտրականներ ծախում են գերմանական արտադրութեան վատ իրեր, բացագանչելով «ա՜յ շարժական ցուցահանդէսի իրերը»: («Б.»)

—

Կ. Պոլսից հեռագրում են, որ օֆիցերները հրաժարվում են ենթարկել «Միութիւն և Առաջադիմութիւն» կոմիտէից դուրս գալու պահանջին: Մօտ հարիւր օֆիցերներ հրաժարական տուին, բայց յետ վերցրին հրաժարականը կոմիտէի պահանջով: («Б. В.»)

—

Հեռագիրը Կ. Պոլսից հաստատում է, որ Հռոմի Թիւրքաց դեսպան Հակկը-բէյ ընդունեց սուլթանի կողմից նրան առաջարկված մեծ վեզիրի պաշտօնը: Ասում են, որ նրա վրա, որպէս իր յաջորդի վրա, մատնացոյց արեց ինքը Հիլմի փաշան, երբ ներկայացրեց սուլթանին իր հրաժարականը:

Թէպէտ նոր մեծ վեզիրի ընտրութիւնը, եղած տեղեկութիւնների համեմատ, համապատասխանում է «Միութիւն և Առաջադիմութիւն» կօմիտէի ցանկութեան, սակայն երիտասարդ-թիւրքերի թեկնածու նրան չէ կարելի համարել: Հակկը-բէյը անկախ մարդ է և մեծ վեզիրի պաշտօնը նա յանձն առաւ այն պայմանով, որ իրան կատարեալ ազատութիւն տրվի: Նոր մեծ վեզիրը կրթված մարդ է եւրոպական մտքով. Թիւրքիայում նա առաջին իրաւաբան է համարվում:

Հակկը-բէյը իր պետական ծառայութիւնը սկսեց հին ռէժիմի ժամանակ: Նոր ռէժիմին նա կարողացաւ նշանաւոր ծառայութիւն մատուցանել, ղեկավարելով ընտրութիւններին առաջին պարլամենտի, համար որպէս արտաքին գործերի մինիստր, սահմանադրութիւնը վերականգնելուց յետոյ:

Հիլմի փաշայի անկումը, որպէս այժմ պարզվեց, սերտ կապ ունի նաւագնացութեան այն կօնցեսիայի հետ, որ տրված է անգլիական Լինչ ընկերութեանը Մէսօպօտամիայում: Անկասկած այդ գործում Գերմանիայի ազդեցութիւնն էլ է դեր խաղացել, մանաւանդ որ գերմանական ձեռնարկողները վերջերս մի շարք անաջողութիւններ ունեցան կօնցեսիաների մասին միջնորդութիւններ յարուցանելու ժամանակ:

Ֆինանսների մինիստր Ջաւիդ-բէյ Լինչ ընկերութեան գործում Հիլմի փաշայի կողմն էր: Այնուամենայնիւ, կարծում են, որ նա, որպէս երիտասարդ-թիւրքերի կուսակցութեան աչքի ընկնող անդամ, իր տեղը կը պահէ նոր մինիստրութեան մէջ:

Նաեւ իր պաշտօնում կը մնայ և ներքին գործերի մինիստր Թալեաթ-բէյ:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի պորտֆէլը առաջարկված է «Միութիւն և Առաջադիմութիւն» կոմիտէի նախագահ Խալիլ փաշային:

ՎԻԼԵԱՄ ԷՎԱՐՏ ԳԼԱԴՍՏՕՆ

(17 դեկտ. 1809 Թ. —17 դեկտ. 1909)

V*)

Մատենագիր Րիդը իր «Անգլիայի ժամանակակից քաղաքական գործիչներ» աշխատութիւնում այսպէս է խօսում Գլադստօնի մասին. «Գլադստօնը շարլատան չէ. և ոչ մի ժամանակ, ոչ մի քաղաքական գործիչ չէ եղել նրանից քիչ շարլատան: Նա բաղդախնդիրներից չէ և երբէք աչքի առաջ չէ ունեցել իր օգուտը, ինտերեսը: Նա երբէք իրան չէ ծախել, և չէր կարող ծախվել՝ ով աւելի թանգ կը տար: Նա ամենապարզ, ամենաազնիւ, ամենաանկեղծ մարդն է, որ ունէ ժամանակ պատիւ է աբել կառավարելու մեծ երկրի ղեկը: Գլադստօնի բնաւորութիւնը, անձնաւորութիւնը, նրա քաղաքական գործունէութիւնը կարելի է բնորոշել այսպէս. նա արել է այն, ինչ հրամայել է նրան իր խիղճը: Ի հարկէ աւելորդ է օրինակներ բերել, թէ ինչպէս Գլադստօնը, հպատակվելով իր խղճի անաչառ ձայնին, զոհել է շատ անգամ իր անձնական շահերը. փաստերը յայտնի են ամենքին: Ամեն մի նրա հասարակական քայլը՝ գործնական թէ ոչ, ճիշդ թէ սխալ, արվել է այն համոզմունքով, թէ այդպէս է թելադրում իր խիղճը: Առ հասարակ քաղաքական գործիչները երկու բարոյական չափ ունեն. մէկը մասնաւոր կեանքի համար, միւսը՝ հասարակականի: Բայց Գլադստօնը համայնքների ժողովում և Գլադստօնը իր Հօվարդէնի ապարանքում վարվել է միատեսակ. նա մի խիղճ ունի, որով և ղեկավարվում է ամեն գործերում: Ահա ինչու նա ժամանակակից քաղաքական գործիչների շարքում մենակ է կանգնած. ումը կարելի է դնել նրա կողքին»: („Отечест. Записки“, 1880 г., № 3, стр. 35—36):

Գլադստօնը տեսական գործիչ չէր բառիս բուն նշանակութեամբ և այդպիսին լինելով գուցէ և պետական ղեկը բազմիցս չէր բռնի իր ձեռքում: Ոչ մի խնդրում, որին նուիրել է ապագայում և ոյժ, և եռանդ, և հանգստութիւն, նա առաջինը, կարապետը չէ եղել: Նա չէ պատկանում այն մտածողների կարգին, որոնք ծնել են նոր մտքեր, ոչ, բայց նա գլուխ է կանգնել ժամանակակից հասարակական առողջ կարծիքին և, ընդգրկելով իր ամբողջ գոյութեամբ նոր միտքը, իւրացնելով խնդրի էական մասը, ամուր բազուկներով առնելով խնդիրը անվողդողդ քայլերով առաջ է գնացել, աշխատելով հնարաւորին չափ արմատօրէն լուծել խնդիրը, սակայն երբէք չէ բաւականացել կարկատաններով և չէ ունեցել յարմարվելու ընդունակութիւն:

Միայն թէ ցանկալի խնդիրը իրագործվի. Գլադստօնը թողել է շատ անգամ և մինիստրական պաշտօնը, անձնական հանգստութիւնը, դժուար՝ ծերունի հասակի համար, անդադար միտինգներ է սարքել, գրել, քարոզել, մինչև որ ժողովուրդը ճանաչել է ճշմարտութիւնը: Այդ տեսակէտից իրաւացի են մի ռուս կենսագրողի այս խօսքերը. «Գլադստօնը ամբողջովին արտայայտում է ժամանակակից Անգլիան և հետևաբար նրա քաղաքական համոզմունքների զարգացման մէջ արտափայլում է, ինչպէս հայելու մէջ, երկրի հասարակական զարգացումը վերջին 40 տարիների ընթացքում» («Отеч. Зап.», 1881 г., № 1, стр. 169):

Նա հաւատաց ժողովրդին, նրա կենդանի ստեղծագործող ոյժերին: Պարտութիւնից յետոյ նա մեծ էներգիայով ուղղում է իր հակառակորդներին այս խրոխտ խօսքերը. «Դուք չէք կարող մենամարտել ապագայի հետ: Մեծ ընկերական ոյժերը, որոնք առաջանում են իրանց թափով ու փառքով և որոնց գնացքը չի կանգնեցնի մի բոլէաչափ կամ ոչնչացնի մեր վիճաբանութեան աղմուկը,—այդ մեծ ոյժերը, ասում եմ ես ձեզ, ձեր դէմ են: Նրանք արդէն մեր կողմն են, և այն դրօշակը որ մենք կրում ենք, գուցէ ներկայումս ծալվի մեր կորացած գլուխների վրա, բայց շուտով կրկին կը ծածանվի: Միացած ժողովրդի ձեռքերը նրան պինդ կը բռնեն, և նա կառաջնորդէ նրան դէպի յաղթանակը, որը որքան էլ դժուար լինի՝ բայց հեռու չէ»:

Գլադստօնի օրինակը և կեանքը ակամայից յիշեցնել է տալիս փիլիսօփայական այն խոր աֆօրիզմը, որով ասպարէզ եկաւ Թերթիս անմոռանալի հիմնադիրը, որի ծանր կորուստի 17-ամեակը լրացաւ այս տողերը գրելիս: Այդ աֆօրիզմը հետևեալն է. «Առաջադիմելու համար շատ բան պիտի սովորել, և շատ բան մոռանալ»...

Ճիշդ է, նրա միտքը չարեց վերջին էվօլիւցիան, բայց դա արդէն գերմարդկային կը լինէր:

Դեռ իր կենդանութեան ժամանակ Գլադստօնը ստացաւ մի փառաւոր տիտղոս, որի արտասանողն առաջին անգամ անգլիացի բանւորն էր. «Կեցցէ մեծ ծերունին»...

Այո, յաւիտեան կեցցէ և կապրի մեծ ծերունին, որ ընթանում էր իր ժողովրդի հետ միասին, նրա բարեկամ, նրան հաւատացող... Գեւորգ Զաքարեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Բագու, 20 դեկտեմբերի

Ամբողջ Բագւում, որ յայտնի է իր տասնեակ թղթախաղի բուն ժողովարաններով ու հարիւրաւոր գինետներով, միայն մի հատ ընթերցարան գոյութիւն ունի, որից հասարակութիւնը կարող է օգտվել: Այդ՝ Մարդասիրական Ընկ. գր.-ընթերցարանն է, որը թէև իր նախկին ճոխութիւնն ու հռչակը չունի, բայց և այնպէս միակ տեղն է, ուր նիւթական սուղ միջոցներ ունեցող մարդը կարող է յագեցնել իր ընթերցանութեան ծարաւը: Եւ սակայն այդ միակ ընթերցարանն էլ առաջիկայ յունվարից դառնում է անմատչելի շատ-շատերի համար:

Վերոյիշեալ ընթերցարանը իր հիմնարկութեան համարեա թէ առաջին օրից ձրի մուտք է ունեցել ամենքի համար: Ճիշդ է, մուտքի վճար կար սահմանված (1 կ.), սակայն այդ բանը պարտադիր չէ եղել ամենքի համար, և ով կարողացել է՝ նա է վճարել միայն:

Իսկ այս յունվարի 1-ից ընկ. վարչութիւնը ընթերցարանից օգտվելու համար նշանակել է իւրաքանչիւր անգամ 2 կոպ. կամ ամսական 30 կ.:

Ի հարկէ այդ վճարը այնքան չնչին է, որ շատերի համար դժուար չի լինի վճարել, սակայն չը պէտք է մոռանալ, որ ընթերցարանի յաճախորդների ամենամեծ թիւը անգործներ են լինում, որոնք փոխանակ փողոցները պարապ թափառելու՝ մտնում են այնտեղ որևէ բան կարդալու: Այդպիսիների համար նոյնիսկ 2 կ. էլ մեծ փող է, և ահա հէնց այդ պատճառով՝ նրանցից շատ-շատերը, չը նայած իրանց բուռն ցանկութեանը, չը պիտի կարողանան օգտվել նրանից, և ընթերցարանը օրական 50—100 յաճախորդի փոխարէն կունենայ ընդամենը 10—20 յաճախորդ: Վ. Դամաքսեան

—

Գուդաուտ, 17 դեկտեմբերի

Այս տարվայ հոկտ. 11-ին հիմքը դրվեց և բացվեց մեզ մօտ միջնակարգ մի ուսումնարան, որ կոչվում է «Գուդաուտի կլիմայական գիմնազիա»: Այդ նորաբաց ուսումնարանն այս տարի դեռ ունի երկու պատրաստական և I դասարաններ, որոնցից կրտսեր պատրաստականի աշակերտները վճարում են տարեկան իւրաքանչիւրը 30 ր., բարձր պատրաստականում սովորողները 40 ր., իսկ I դասարանի աշակերտները 50 ր.: Դպրոցի աշակերտների թիւը հասնում է 100-ի, որոնցից աւելի քան 40-ը հայեր են: Այս վերջինների ամենանշանաւոր մասը մեր շրջանի գիւղերից—Մծարա, Անուխա, Սպիտակ-գետ, Խոփ—են գալիս: Չը նայած որ դպրոցի աշակերտութեան մօտ կէս մասը հայերն են կազմում, այնուամենայնիւ ուսումնարանում ոչ հայերէն լեզու և ոչ էլ կրօն չէ դասաւանդվում, թէպէտև այդ առիթով ծնողների կողմից մի քանի անգամ դիմումներ են եղած ուսումնարանի վարչութեանը: Ուսումնարանի վարչութիւնը հասարակութեան այդ պահանջին բաւարարութիւն չէ կարողացել տալ այս տարի շնորհիւ նիւթական միջոցների սղութեան: Աւանը այդ ուսումնարանի պահպանման համար դիմել է կառավարութեանը, որպէսզի սա տարեկան 2000 ր. յատկացնէ ուսումնարանի ընթացիկ ծախսերի համար և, բացի դրանից, 20,000 ր. էլ դպրոցական սեփական շինութիւն կառուցանելու համար: Բայց դեռևս որևէ պատասխան չէ ստացված կառավարութիւնից: Փ. Մինասեանց

—

Բաշ-Աբարան (Էջմ. գ.), 17 դեկտ.

Հայ գիւղական կեանքում, ուր եւրոպական հասկացողութիւններն ու կուլտուրան այնքան դժուար են պատուաստվում, ուրախալի երևոյթ պիտի համարել ֆելդշերական կայանի բացումը:

Այդպիսի մի հիմնարկութեան արժանացաւ վերջերս Աբարանի շրջանի Ալիքուչակ գիւղը. այդ գիւղում անցեալ ամսի սկիզբներին բացվեց ֆելդշերական կայան և դեղատուն, որպիսի հիմնարկութեամբ մի մեծ պակաս լրացվեց մեր շինական կեանքում: Շրջանիս գիւղացիութիւնն այլևս չի տառապի զանազան հիւանդութիւններով, այլ մի 10—20 կոպէկով, նոյնիսկ ձրիաբար, կարող է իր ցաւին դարման գտնել:

Ֆելդշերական կայանի ու դեղատան հիմնարկութիւնից յետոյ՝ մեր շրջանը կարիք է զգում և պօստային բաժանմունքի, որը շրջանիս հաղորդակցութիւնը դրսի աշխարհի հետ բաւականին կը դիւրացնէր:

Վերոյիշեալ ուրախալի երևոյթին, սակայն, հակադրվում է մեզանում մի տխուր փաստ: Դա այն է, որ մեզանում ուսումնարանական գործը չափազանց անմխիթար վիճակի մէջ է դրված: Այդ երևոյթի պատճառը գիւղացիների անփութութիւնն է: Չը նայած որ Բ. Հ. Կուլտ. Միութեան կրթական սեկցիան յատկացրել է մեր ուսումնարանի համար տարեկան 360 ր., դպրոցական գործն այնուամենայնիւ ներկայումս անմխիթար դրութեան մէջ է գտնվում մեզանում: Ս. Օ.

—

Գիրք (Գեօգչայի գաւ.), 15 դեկտ.

Գիրք գիւղը բաղկացած է 300 ծխից 2286 դեսեատին հողով, որից մօտ 300 դես. արօտատեղիներ և 30 դես. խաղողի այգիներ են, իսկ մնացածը վարելահողեր: Գիւղացիների գլխաւոր պարապմունքն է հողագործութիւնը և այգեգործութիւնը: Հացաբոյսերից ցանում են մեծ մասամբ ցորեն, գարի և կորեկ: Պէտք է ասել, որ գիւղիս հողերը գովված են իրանց լաւ յատկութեամբ, մանաւանդ արօտատեղիները, որ տարվայ ութն ամիսը կանաչ խոտով են ծածկված և որի պատճառով ծառայում են լեռնականների համար որպէս ամենալաւ ձմեռանոցներ: Հողերը անջրդի են: Սովորական տարիներում ցորենի բերքը լինում է 1—10, գարունը 1—12, իսկ կորեկինը 1—14: Այս թիւերը անձրևոտ տարիներում աւելի մեծ են լինում:

Հողագործութիւնը և այգեգործութիւնը, որ գիրքեցիների միակ ապրուստի միջոցներն են, երեսի վրա են ընկած: Բագուն համարեա գիւղիս աշխատաւորների կէսը կտրել է հողից: Հարստութիւն ձեռք բերելու տենչով ամեն տարի հարիւրաւոր աշխատող ձեռքեր տնով-տեղով գաղթում են դէպի քաղաք, ամայութեան մատնելով իրանց տունը, հողը և այգին: Հազիւ թէ ամբողջ գիւղում մի հարիւր տուն իսկական մշակներ, մաճ բռնողներ լինեն. մնացած մասը կամ հրաժարվել է հողից և կամ թէ ուրիշներին է վարձով վարել տալիս իր հողը: Նոյն վիճակի մէջ է և այգեգործութիւնը: Իսկ անասնապահութեան մասին խօսելն աւելորդ է: Գիւղացիք իրանց տան պանիրն անգամ չեն կարողանում ստանալ, մինչդեռ լեռնականներն ահագին օգուտներ են ստանում տեղիս արօտատեղիներից:

Գարնան անձրևներն առատ լինելով այս տարի հացահատիկները բաւականին արժանացել են: Սակայն, հակառակ բարենպաստ գարնան, այս տարի աշունը չորային անցաւ և վնասներ պատճառեց գիւղացիներին, մանաւանդ որ չը տեսնված քանակութեամբ դաշտային մկներ էլ երևացին՝ սպառնալով ցանված արտերին: Բացի դրանից՝ կենդանիների մէջ տարածվել էին և տարափոխիկ հիւանդութիւններ: Յ. Շ.

—

Նիժ (Նուխու գաւ.), 15 դեկտ.

Մեր գիւղը, որ բաղկացած է 800 տնից, հետզհետէ կենդանութեան նշաններ է ցոյց տալիս: Ներկայումս, մոռացութեան տալով անձնական թեթև հաշիւները, մեր շինականները ձեռք են պարզել իրար և իրանց նորընտիր տանուտէրի առաջնորդութեամբ՝ գիւղի փողոցների վերանորոգման գործով են զբաղված, որ երկար տարիներ չը վերանորոգվելու պատճառով, անց ու դարձը միանգամայն անհնարին էր դարձել:

Նորընտիր տանուտէրի գլխաւոր գործերից մէկն էլ առայժմ համարվում է նրա մի ուրիշ ուշագրաւ կարգադրութիւնը: Գիւղի որևէ յանցանք գործողներին, փոխանակ բանտարկելու կամ յօգուտ իր գըրպանի տուգանք վերցնելու, ինչպէս այդ ընդունված է առհասարակ գիւղերի տանուտէրների մէջ, վճռել է բարոյական պատժի ենթարկել, ուղարկելով տեղիս հայոց ծխ. դպրոցի այգին, որ բաւականին մեծ տարածութիւն է, փորելու ծառերի տակը, մի կամ երկու օր, նայած գործած յանցանքին:

Բայց պէտք է ասել, որ գիւղի ներկայ համբերաշխ կեանքն ու խաղաղութիւնը մութ ոյժերին անհանգստութիւն է պատճառում, որոնք ամեն կերպ աշխատում են գիւղի անդորրութիւնը վրդովել և ստեղծել անցեալ տարվայ անտանելի կեանքը, իր հրէշաւոր կողմերով... Բայց, բարեբաղդաբար, այդ ոյժերը շատ չնչին են: Նորեկ-ուտի

—

Հզորտի (Վարանդա), 20 դեկտ.

Ամսիս 16—17-ի գիշերը, Հզորտի գիւղացի Գրիգոր Զաքարեանի գոմից դուրս են տանում 6 գլուխ տաւար ու գոմէշ մօտ 300 ր. արժողութեամբ: Կասկածը ընկնում է հարևան Ղարադաղլու գիւղի թուրքերի վրա, որոնք իմանալով Զաքարեանի բացակայութիւնը գիւղից, օգտվում են հանգամանքից ու գոմի քարէ պատը քանդելով, տանում են ապրանքը: Նման դէպքեր յաճախ պատահում են նաև հարևան գիւղերում: Խ. Զաքարեանց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՈԼՍՈՅ ԿԵԱՆՔԷՆ

—

Կ. Պոլիս, 11 դեկտ. (ն. տ.)

Գարնան օդեր ունինք:

Հասարակութիւնը գոհ է գեղածիծաղ օրերէն. Թաքսիմէն մինչև Եիւքսէք-Կալդըրըմ, Թունէլի մուտքը, ժողովուրդը կը շարունակէ ամառնային շրջագնացութիւնը:

Պոլիս մայ դաշտ կերևի, և պատճառը լաւ ու գեղեցիկ փողոցներու պակասն է: Բէյօղլուի մեծ շուկային վրայ՝ ամբոխակոյտը խուռներամ ալեծածան կը շարժի. յաճախուած նշանաւոր փողոցը այս ըլլալով, ժողովուրդը չափազանց կերևի: Սալայատակի անհաւասարութեան պատճառով՝ բազմութիւնը կը ստիպուի միջուղիի վրայէն քալել. բարեբաղդաբար բնաւ արկածներ չեն պատահիր. միայն երբեմն կը տեսնես խստերախ ձիերու տապալումը. և այդ՝ կառավարներու անգութ անխելքութեան պատճառաւ տեղի կունենայ: Բեռնակիրը ըստ քմաց կը շեղի միջուղիէն, կը բարձրանայ սալայատակին վրայ և իր մեծղի բեռներով՝ կը կտրէ արդուզարդով պճնազարդ ամբոխակոյտը: Անտարտունջ տեղի տալու է բեռնակիրին: Հիմա սահմանադրութիւն է, և սահմանադրականներուն մէջ կան նաև ռամկավարականներ: Միայն մեռելն է, որ Դողրի-եօլէն անցնելու հրաման չունի: Տրամվայի կործանումը տեսայ ճիշդ Թաքսիմի պարտէզին դիմացը. անհրեկութիւնը կը տիրէր տրամվայի մէջ եղող ուղևորներուն վրայ. կանցնէր գոմէշներու մեծ սայլը. անասունները կը կրէին ամբողջ տան մը ընդհանուր կահ-կարասին, անկողիններ, մահճակալներ, հանդերձանոցներ (զարդ-լոբ), գրասեղաններ, դիզադէզ, բազկաթոռներ, աթոռակներ, բազմոցներ և այլն: Ժողովուրդը զարմացած կը դիտէր եղելութիւնը. սայլին քիւրդ կառավարը՝ կը վիճէր տրամվայի կօնդուկտօրին հետ. ոստիկան մը չէր երևնար. ու քիւրդը անպարտ՝ իր սայլը առաջ կը քշէր... Այս դեռ ոչինչ. կը պատահի երբեմն ձիերու, որոնք, միջուղիէն շեղելով, պերճազեղ աղնուականներու շրջագնաց ամբոխին մէջ կը մտնեն: Նորաձեւ բան մը կը համարուի օտոմօբիլը. վայ է ժողովուրդին, երբ անցնի ան. Դողրի-եօլի ամբողջ երկայնութեան վրայ փոշիի ամպը աղջամուղջի պէս կը նստի. Թուխ այտերը այլ ևս բրինձի փոշիին պէտք չեն ունենար: Օտոմօբիլը ամենէն աւելի ռամիկ թիւրքին սքանչացում կը պատճառէ. ան միտքը դրած է որ՝ սատանայ կը բնակի մէջը: Ռամիկ թիւրք երիտասարդներ՝ օտոմօբիլի թռիչը տեսնելնուն՝ ապշած կը բացագանչեն.

— Բաք շու շէյթանայ. վայ խընզըր վայ:

*

Օրուան խնդիր է «Ճաշակը». հետաքրքրութեամբ կը հարցնեն, թէ առած եմ «Ճաշակը»: Խանդավառութեամբ կը սպասէի այս գործին. դժբաղդաբար յուսախաբ կը մնամ: «Ճաշակի» կազմող յարգելի Ա. Պիպէռճեան վաղուց իր մասին ձեռնհասութեան կորովի համբաւ մը պահելով գնահատումներուս մէջ, կանխաւ կը կարծէի թէ իր «Ճաշակին» երկրորդ տպագրութիւնը՝ իրօք գրական հատընտիր հրատարակութիւն մը կըլլայ:

Սակայն համոզուած եմ, որ Պիպէռճեան՝ աճապարելով հրատարակած է զայն:

Սահմանադրութիւնը անսպասելի էր, որով հրատարակիչները կարող չէին կանխաւ պատրաստութիւն տեսնել գրական կարևոր գործերու համար. Պիպէռճեան՝ յանկարծակիի կուգար, և, ուզելով գեղեցիկ գործ մը հրատարակել, աճապարանքը զայն կը խաթարէր:

Այս հրատարակութիւնը առաջին անգամ լոյս կը տեսնէր 1884-ին: Բռնակալական շրջանին՝ մոռցուած էր այդ գիրքը, որ իր տեսակին մէջ իրմէն վերջը շատ մը հրատարակուած «Ճաշակ»-ներէն աւելի ճաշակաւոր ու գերազանցօրէն բարձր կը մնար:

Առաջինին նիւթերու ընտրութիւնը՝ աւելի աններողամիտ, լրջախոհ ըմբռնումով էր եղած, քան թէ այս երկրորդը, որ գրական խեշերանքով ճոխացած է:

Ա. Պիպէռճեան՝ ուզած է սիրաշահել ամեն մի գրիչ շարժող. արդէն հատընտիր մը կազմելու համար՝ դժուար է, որ իրօք գեղեցկագիտական ընտիր նիւթեր գտնենք. մեր գրագէտ դասակարգին մէջ տակաւին հազուագիւտ են հեղինակներ, որ արժանի համարուին իբրև գրագէտ կամ գեղեցկագէտ վարպետ մատնացոյց ըլլալու գրասէր աշակերտին և ընթերցող հասարակութեան:

Հայ հեղինակներէ շատ շատերը, որ նոր «Ճաշակի» այս երկրորդ տպագրութեան մէջ անարժանաբար մուտք գտեր են, իրենք իրենց ամեն մէկը ինքնուրոյն՝ հեղինակութեանց մէջ՝ բնական է, որ գոյն մը, ցոլք մը, գաղափարական նշանակութիւն մը ունին. սակայն տակաւին իրենց պատառիկ գրութիւնները՝ վարպետի գործ համարուելու աստիճանին վրայ չեն: Եթէ նկար մը՝ որ վարպետի գործ չէ, և ինքն իր ամբողջութեան մէջ գրաւիչ է, ուրոյն անջատ է անոր գլուխը, կամ ձեռքը, այն աշակերտին առջև ընդօրինակելու համար չենք դներ, վասնզի վարպետի գործ չէ, ունի արուեստի թերութիւններ:

Հատընտիր հրատարակութենէն՝ կը պահանջուի անաչառ խիստ ընտրութիւն. ծաղկեփունջ մըն է այն, որուն մէջ անյաջող գունութիւնները շաղգամի, ստեպղինէ գաղափարը կուտան:

Իր այս թերի կողմերով հանդերձ, Պիպէռճեանի «Ճաշակը» ամենէն գնահատուածը կընդունիմ. թերութիւնները, զոր դիտեցի, աւելի ստուարացած գտած եմ կարգ մը ուրիշ անճաշակ «Ճաշակ»-ներու մէջ: Նոր յաւելուածներ ըրած է, բայց, անոնց մէջ կան նաև նուազ թուով արժանաւորներ, և ամենէն արժանաւորները ռուսահայ հեղինակներն են:

Պիպէռճեանի այս գործը գնահատումի արժանի է, ամեն հեղինակի մասին երկտող կենսագրական մը զետեղելովը. այս բաժինին մէջ ալ չափազանց գովեստ զգուշացած չէ:

Վերջապէս այս «Ճաշակը», թողլով մէկ կողմ իր թերութիւնները, պերճ շարժանկարի մը գաղափարը կուտայ. գրականութիւնը, գեղարուեստը, գեղեցկագիտութիւնը, գրաւիչ գաղափարականը՝ մանրանկարի հմայքովը՝ անոր էջերուն մէջ խտացած ճոխ գոյներով՝ կը ներկայանան ընթերցողին երևակայութեան առջև:

Փակագծի մէջ դիտել պիտի տամ յարգելի Պիպէռճեանի, որ Դուրեանց «Ծիծեռնակի» երգը հետևողութեամբ գրած է. այս մասին տարի մը առաջ ընդարձակ գրած եմ «Մշակի» մէջ:

Անցեալ օր իմ քովս էր ռուսահայ գրողներէն «Ընկեր» թերթի ամենէն գործօն աշխատակիցներէն մէկը: Երկարօրէն խօսելով ռուսահայ և թիւրքահայ գրականութեանց մասին՝ դիտել տուի ժրաջան գրող բարեկամիս:

— Դուք ռուսահայերդ գրական խոշոր թերութեան մէջ էք. ժամանակին կը ծաղրէիք Կ. Պոլսոյ գրիչները, ըսելով որ անոնք սոնկի պէս բուսնող բանաստեղծներ են. մինչդեռ կարելի է ըսել նաև ձեր դասակարգին համար: Ռուսահայը այժմ չափազանց գրողներ ունի, սակայն մենք՝ Թիւրքիայի հայերս կարող չենք որոշակի վերլուծել անոնց արժանիքը: Ես համոզուած եմ, որ ռուսահայ գրողը անտարակոյս՝ ռուս մեծ հեղինակներու ազդեցութեան տակ գրիչ կը շարժէ: Մենք որպէսզի իմանանք, թէ ինչ աստիճան այդ օտար հեղինակներէ ներշնչուած են հայ գրողները, հարկ է, որ թարգմանուին ռուս հեղինակները: Ինչու չեն թարգմանուիր անոնք:

— Մենք ռուսահայերս, — կըսէր,—կը հասկնանք ռուսերէնը. այդպիսով թարգմանուած գրքերը ով կը գնէ:

Ես պատասխանեցի.

— Դուք կը սխալիք: Ես գիտեմ, որ Կովկասի մէջ մշակ դասակարգը ռուսերէն չի գիտեր. արդէն նոյնիսկ ռուս վարժարանէն ելլող հայ աշակերտը՝ հազիւ կարող է հասկնալ ռուսերէնը: Ուրեմն՝ եթէ գրական ռուս հեղինակները թարգմանուին, հրատարակիչը արդէն իսկ ապահովապէս կը շահի և միևնոյն ատեն համայնքը կօգտուի ռուս հեղինակներէն, ու մենք թիւրքահայերս ալ կը ծանօթանանք այդ հեղինակներուն և կը կարողանանք վերլուծել ռուսահայ գրողներու գրական արժանիքը:

Դիտել տուի բարեկամիս, որ տակաւին ռուսահայք՝ չունին ռուս հեղինակներու ինգրութիւններով կազմած հատընտիրներ: Ինծի ծանօթ են մէկ քանի հայ բանաստեղծներու հաւաքածուներուն մէջ ռուս հեղինակներէ թարգմանուած պատառիկներ Եմաստրեանի Լերմոնտովի ու Պուշկինի թարգմանութիւնները: Սակայն այդքանը բաւական չէ: Ուրոյն ռուս հեղինակներու հատընտիր թարգմանութիւններ անհրաժեշտ են: Ե.

---

*) Տես «Մշակ» №№ 279, 281, 284 և 286.

ՄԵՐ ՏԱՂԱՆԴՆԵՐԸ

Այսօր խօսքս Անդրէաս Տէր-Մարուքեանի մասին է։

Նա Պարիզումն է այժմ, դրութիւնը ծանր, ինքը տկար, կարօտ ապրուստի, և միակ ցանկութիւնն է վերադառնալ հայրենիք։

Հայրենիք..., որից, սրանից մի քանի տարի առաջ, նա փախաւ շտապով, հեռանալով բարեկամներից, ազգականներից, կտրելով նրա հետ բոլոր կապերը, փախաւ առ միշտ...

Անդրէաս Տէր-Մարուքեանը շնորհալի և տաղանդաւոր քանդակագործ է։ Յիշենք նրա Գամառ Քաթիպայի և Մ. Նալբանդեանի կիսարձանները, որ այժմ Նոր-Նախիջեանի ս. Խաչի վանքն են զարդարում։

Վաղուց արդէն ճշմարտութիւն է դարձած Գրիգոր Արծրունու այն վկայութիւնը, թէ մեր ինտելիգենտները գիւղերից փախչում են, գալիս են քաղաք, մոռանալով իրանց պարտքը։ Ես կաւելացնեմ, որ տաղանդաւոր ինտելիգենտները շտապում են մայրաքաղաք։ Միայն մայրաքաղաքը կարող է նրանց հասկանալ, գնահատել և բաւարարութիւն տալ։

Եւ մայրաքաղաքներում կան այնքան հայ տաղանդաւոր ինտելիգենտներ բոլորովին մոռացված, կարօտ անգամ ապրուստի, օրվան հացի։

Ա. Տէր-Մարուքեանը մեր փոքր ազգի մէջ կարող էր մեծ տաղանդ լինել։ Անվերջ յոյսեր, երազներ... Նա շտապում է Պարիզ և մնում է մեծ քաղաքի մէջ մի փոքր տաղանդ, որ չունի առանձին արժէք։ Պարիզում կան քանդակագործ հսկաներ...

Այսպէս՝ Թիթեռնիկը այրում է իր թևերը, այրում է և դարձեալ շտապում կրակի լոյսին...

Արդեօք Թիթեռնիկը ցանկանում է հանգցնել այդ կրակը, թէ վառվել նոյն կրակով...

Ափսոս...

Պարիզը չիրագործեց Անդրէասի յոյսերը և երազները։ Նա հիւանդացաւ և այժմ նրա միակ ցանկութիւնն է վերադառնալ հայրենիք, այն հայրենիքը, որից նա փախել էր, կարծելով որ նա երբէք չի վերադառնայ, այն հայրենիքը, որ նա կարծել էր իր տաղանդի գերեզմանը, և սակայն, կաւելացնեմ, այն հայրենիքը, որը միայն կարող է այժմ փրկել նրան...

Թիթեռնիկը հասկացաւ իր սխալը...

Այդպէս Թիթեռնիկներ էլ լինում...

Մեր վրա պարտք կայ օգնել նրան։ Գուցէ Երևանի հասարակութիւնը կը յիշէ, որ Տէր-Մարուքեանը կարող է նրա պարծանքը լինել։ Նա ցանկանում է վերադառնալ Երևան. և մի՞թէ Երևանի մէջ չեն գտնվի զգացված, բարի, ազնիւ սրտեր՝ փրկելու մի տաղանդաւոր հայրենակից քաղաքացի։ Պէտք է շտապել հասցնել նրան օգնութիւն։ Նա վհատված է, թուլացած, կորցրած իր հաւատը և դեռ տկար։

Թող հայ հասարակութիւնը կատարէ իր պարտքը...

Անդրէաս Տէր-Մարուքեանի հասցէն սա է. Paris, 54, Rue Lhomond, Andreas Ter-Maroukian.

Դր. Զալխուշեան

ՃԱՆԱՉԵՆՔ ԿԵՂԾՈՂՆԵՐԻՆ

Վերջերս շատ յաճախ տեղական թերթերի մէջ կարդում ենք, որ այս-ինչ հողատէր իշխանը այն-ինչ տեղում ունեցած իր կալուածը վաճառում է շատ բարձր գնով՝ Ռուսաստանից եկած գաղթականներին։

Եւ առաւելապէս սոյնանման լուրեր են հաղորդում տեղական վրաց թերթերը։

Ամենքին յայտնի է, որ մեր երկրի գիւղացիութիւնը և գլխաւորապէս հայ և վրացի գեղջուկները սակաւահողութեան շնորհիւ կրում են անհուն զրկանքներ և համարեա թէ միշտ կիսաքաղցած դրութեան մէջ են գտնվում։ Եւ այսպիսի պարագաներում և աննպաստ պայմաններում գտնվելով հանդերձ, նրանք, մարդկութեան այդ խորթ զաւակները, դեռ ևս ենթարկվում են նորանոր զրկանքների ու ստիպված թողնում-հեռանում են դարերով իրանց ապրած հողից։

Եւ ովքե՞ր են նրանք, որոնց պատճառով մեր խեղճ ու կրակ եղբայրները զրկվում են իրանց արիւն-քրտինքի գնով մշակվող հողի վերջին պատառից ևս։ Դրանք մեր երկրի արտօնեալ իշխաններն են, որոնք խղճի ամենայն հանդարտութեամբ, իրանց անյատուկ ստամոքսը լցնելու դիտաւորութեամբ՝ ամենայն սառնասրտութեամբ վաճառում են իրանց կալուածները եկւոր գաղթականներին և անարգ ոսկու փայլով կուրացած ու տարված՝ խուլ են ձևանում հանդէպ խեղճ գիւղացիների լաց ու կականի և աղաչանքի՝ չը վաճառել իրանց գոյութեան վերջին ապաւէնը և կերակրող հողի կտորը։ Բայց մի՞թէ նոյնանման աղաչանքները կամ խեղճ գեղջուկների տնտեսական անելանելի կացութիւնը կարող են մազաչափ անգամ ազդել՝ պարոններ ազնուականների կարծրացած սրտերի վրա։ Եւ երբ իրանց պէտք եղած դրամի աղբիւրները գտնված են, մնում է միայն ասել՝ «Անձն իմ, կեր, արբ և ուրախ լեր»։ Եւ վերջացաւ ամեն ինչ։

Բայց ընթերցողը ամենայն իրաւամբ կարող է հարց տալ մեզ, թէ արդեօք այդ «ամենաթունդ ազգասէրների հողերի վրա ապրող» գիւղացիները, մի՞թէ իրանց աշխատանքից մասն ու բաժին չեն հանում իրանց «օրինաւոր տէրերին»։

Այո, յարգելի ընթերցող, նրանք ստանում են «իրանց հասանելիք մասը», բայց այդ քիչ է և չէ բաւարարում նրանց «բազմապիսի պէտքերին». նրանց աւելի շատ է հարկաւոր. և երբ այդ շատը արդէն գտնված է, ինչո՞ւ չօգտվել, ինչո՞ւ ձեռքից բաց թողնել և ինչո՞ւ մտածել, որ այդ ամենի շնորհիւ խեղճ գեղջուկները թափառական կը դառնան և մի գեղեցիկ օր մեր երկիրը կը դատարկվի իր բնիկներից, տէրրիտօրիան դուրս կը գայ նրանց ձեռքից, իսկ նրանց տեղ բնակութիւն կը հաստատեն եկւորները։ Այս ամենը այնչափ ցաւալի ու աչքի զարնող չէին լինի, եթէ մեր երկրում լինէին ընդարձակ դատարկ հողեր. բայց երբ մենք զուրկ ենք ազատ հողերից, արդեօք կալուածատէրերի վարմունքը դատապարտելի չէ՞։

Փաստերը չափազանց պերճախօս և ազդակոչ են, և մենք աւելորդ ենք համարում այլ ևս ասելու, որ այս ամենից յետոյ դեռ մեր մէջ և, որ գլխաւորն է, հէնց այս տեսակ հարուածներ կրողների մէջ դեռ ևս կը գտնվեն մարդիկ, որոնք միամտութեամբ հաւատ կընծայեն այս տիպի մարդկանց «ազգասիրական» հաւաստիացումներին։

Sapienti sat. Յ. Գասպարեան

ԻՍԼԱՄԻԶՄԻ ՊՐՕՊԱԳԱՆԴԱՆ

«Кав. Тел.»-ը «La Turquie»-ի Կազանի թղթակցի խօսքերից գրում է. «Իսլամիզմը դաւանական համբերատարութեան մանիֆէստի հրատարակութեան ժամանակից Ռուսաստանում ապշեցուցիչ աջողութիւններ է անում։ Նրա պրօպագանդան առանձնապէս աջող է պետութեան հիւսիս-արևելեան նահանգներում։ Այստեղ ամբողջ գիւղեր ընդունում են մահմեդականութիւն։ Մահմեդականներն այդտեղերում բացել են բազմաթիւ դպրոցներ և վարդապետողների ամբողջ խմբեր շրջում են գիւղից գիւղ։ Այստեղի գիւղացիները կատարեալ կռապաշտներ են. նրանք ուրախութեամբ լսում են Մահմէդի վարդապետութեան խօսքերը և մտնում են ուղղափառ մահմեդականների շարքերը։ Հարուստ մահմեդականները եռանդով պաշտպանում են պրօպագանդան և նոր դարձածներին օգնում են տասնեակ հազար րուբլիներով։

«Ռուսաստանի հիւսիս-արևելքում հարուստ մահմեդականների փողերով հրատարակվում են տասն մահմեդական լրագիրներ, որոնք ձրիաբար տարածվում են ռուս ազգաբնակութեան մէջ»։

Լրագրի ասելով, մահմեդականութիւն ընդունած բնակիչների թիւը հասնում է 50 հազար հոգու, որոնց մեծ մասը ընկնում է հէնց Եւրոպական Ռուսաստանի հիւսիս-արևելեան 6 նահանգների վրա։(«Н. В.»)

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Դեկտ. 23-ին, կովկասեան զինուորական նահանգական դատարանում դռնփակ քննվեց վրաց դադարած «Իսարի» լրագրի նախկին խմբագիր Եստատէ Ավալիշվիլիի գործը, որ մեղադրվում է ֆեդերալիստների յեղափոխական կազմակերպութեանը պատկանելու և անլեգալ գրականութիւն տարածելու մէջ։

Դատարանը Ավալիշվիլիին մեղաւոր ճանաչեց միայն վերջին յանցանքում և դատապարտեց մի տարով բանտարկութեան։

—

Յետաձգվեց մինչև յունվարի 2-ը Թիֆլիսի գիմնազիստներ իշխ. Չերքեզովի, իշխ. Աբխազիի և Գորբաչեվի գործը, որոնք մեղադրվում են գիմնազիայի շէնքում ռումբեր պահելու մէջ։

—

Գանձակ, 21 դեկտեմբերի

Ամսիս 19-ին և 20-ին տեղիս զինուորական դատարանում քննվում էր Շուշու գաւառի Կարաքէնդ գիւղի 15 բնակիչների գործը, որոնք մեղադրվում էին 1908 թ. մարտին երկու լեզգիների սպանութեան գործում։ Դատարան էին կանչված 58 վկաներ, որոնցից 3 հոգի լեզգիներ, իսկ մնացածը հայեր. 15 մեղադրեալներից, որոնցից 4-ը հրաշխաւորութեամբ ազատ էին, 8-ին դատարանը արդարացրեց, իսկ 3-ին, այն է՝ Գր. Աղաջանեանին, Բ. Աւետիսեանին և Թ. Առստամեանին, դատապարտեց մահվան՝ կախաղանի միջոցով։ Առաջին երկուսը յանձն առան յանցանքը, որ վերջինի թելադրութեամբ է եղել, իսկ սա յանձն չառաւ։ Մահվան դատապարտվածներին պաշտպանում էր դատարանի կողմից նշանակված մի զինուորական, իսկ արդարացածներին պաշտպանում էր փաստաբան Բայկով։

Գանձակեցի

ՋՔԱՒՈՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Տօների առիթով ստացանք Գ. Լիանօզեանից 3 րուբլի։

Ուրեմն մինչև այժմ յիշեալ նպատակով ստացել ենք 9 ր.։

ՅՕԳՈՒՏ ԱԴԱՆԱՅԻՆԵՐԻ

«Մշակի» № 284-ում տպված հաշւից մեզ մօտ մնացել էր 231 ր. 36 կ.։

Այնուհետև ստացանք՝ 1) Դուբօվկայից, Թովմաս Մարգարեանից—10 ր., 2) Վլադիվօստօկից, շտաբս-կապիտան Փիրումեանից —5 ր., 3) Կուշկայից, Թ. Ս. Խասապետեանից, «Վանգոյժ» գրքոյկի (հրատ. Յ. Խօջամիրեանի) 25 հատի վաճառումից գոյացած՝ 3 ր. 75 կ., 4) Սամարղանդից, Ն. Շաքարեանից—1 ր., 5) Տաշքենդից, մանուկ Հրաչեայ Ոսկանեանի ձեռքով հանգանակված—5 ր. 50 կ. (նուիրել են Հրաչեայ Ոսկանեան—2 ր., Համբ. Ոսկանեան, Հայկանոյշ Ոսկանեան, Յ. Ոսկանեան, Նաւ. Ոսկանեան, Յ. Հայրապետեան, Կ. Մկրտումեան—25-ական կոպէկ, Գ. Գասպարեան՝ 50 կ., Լևոն Ոսկանեան—55 կ., Մ. Այդինեան և Սիր. Այդինեան—30-ական կ., Վ. Խաչիբաբեան և Մ. Բաղդեան—20-ական կ.), 6) Կօկանդից, Կ. Պարոնեանից, հանգանակված դեկտ. 6-ին Մ. Աթաբէկեանի տանը, ընթրիքի ժամանակ—38 ր.։ Ուրեմն ստացել ենք 63 ր. 25 կ., որով ընդամենը ունենք մեզ մօտ 294 ր. 61 կ.։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Բժշկապետ Յ. Գասպարեան, ինչպէս ամեն տարի, 1910 թ. համար ևս ուղարկել է մեզ 100 րուբլի՝ «Մշակ» լրագրի 10 օրինակ ուղարկելու զանազան տեղեր։

Նոյն նպատակով Յովհաննէս Փանեանը Բագուից ուղարկել է մեզ 20 ր. 2 օրինակ «Մշակի» համար։

Նոյն նպատակով ուղարկել է մեզ և Գ. Լիանօզեանը 10 ր. 1 օր. «Մշակի» համար։

◆ Այսօր, Թիֆլիսի Արտիստական ընկերութեան մեծ դահլիճում տեղի կունենայ բազմակողմանի և ճոխ ծրագրով մանկական մեծ երեկոյթ յօգուտ Հայ Փիլանտրոպիական և Տնայնագործական Ընկերութեան։ Ընկերութեան համակրելի նպատակը և գոյութիւն ունեցող գիւղացիական կարիքը, որի լրացնելու իր ամբողջութեամբ ձգտում է յիշեալ ընկերութիւնը, կը դրդեն, համոզված ենք, հայ հասարակութեանը՝ լցնել դահլիճը։

◆ Դեկտ. 23-ին, Գրական-Գեղարտական Սալօնում, Տ. Նազարեան երեկոյթի ժամանակ ի միջի այլոց ցուցադրել էր երկու շատ աջող գունատիպ լուսանկարներ, որոնք ներկայացնում են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին իր շքախմբի հետ քաշված Սանահինում և ճանապարհին գնացքի մէջ։

◆ Դեկտեմբերի 24-ին Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվին ներկայացաւ մի պատգամաւորութիւն Հին-Նախիջեան քաղաքի կողմից և տեղեկացրեց կոմսին, որ, ի յաւերժացումն կոմսի հումանիստ և խելացի կառավարութեան, 1908 թ. մարտի 19-ին Նախիջեանի լիազօրների ժողովը միաձայն որոշել է ընտրել նորին պայծառափայլութեանը Նախիջեանի պատւաւոր քաղաքացի, իսկ յետոյ այս տարվայ մայիսի 7-ին Թագաւոր Կայսրին հաճելի եղաւ այդ որոշումը հաստատել։ Վերջում պատգամաւորութիւնը յայտնեց, որ Նախիջեանի բնակիչների միահամուռ ցանկութիւնն է տեսնել իրանց մօտ իրանց առաջին պատւաւոր քաղաքացուն՝ սիրեցեալ կոմսին։

◆ Կովկասի Փոխարքայի խորհրդի միջոցներից 15,000 րուբլի է յատկացված Շամախիի գաւառում երևցած դաշտամկներին ոչնչացնելու համար։ Միւս կողմից որոշված է բաւարարութիւն տալ Գանձակի նահանգապետի միջնորդութեանը և ուղարկել մկնդեղ Զանգեզուրի գաւառի դաշտամկներին կոտորելու նպատակով։

◆ Կենդանիների խնամատար կովկասեան ընկերութեան անդամների իրաւունքները ընդարձակված են։

◆ Թիֆլիս քաղաքի ելևմտի հաշւեկշիռը կազմելով, վերջնականապէս պարզվել է, որ ըստ հնարաւորութեան ծախքերը կրճատելով և եկամուտի մի քանի կէտերը աւելացնելով էլի դեֆիցիտ կը ստացվի մօտ 200 հազար րուբլի։

◆ Դեկտեմբերի 24-ի երեկոյեան Թիֆլիսի շրջակայ բարձունքների վրա եկաւ այս ձմեռվայ առաջին ձիւնը քիչ քանակութեամբ։ Քաղաքի մէջ տեղաց անձրև, որը շուտով և դադարեց։

◆ Այս տարվայ տարօրինակ և չը տեսնված ձմեռը համարեա ամբողջ Կովկասում նպաստում է տարափոխիկ հիւանդութիւնների սաստկանալուն և դաշտամկների ու գիւղական բերքի այլ թշնամիների զարգանալուն։ Այսպէս՝ դաշտամկների մեծ քանակութիւն երևացել է Զանգեզուրի, Շամախիի, Լէնքօրանի, Ջէվադի գաւառներում։ Վերջին երկու տեղերի մկներին ոչնչացնելու համար մեկնել է գիւղատնտես Մեդվէդևը։

◆ Երկուշաբթի օրը, դեկտեմբերի 28-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի հերթական նիստում քննվելու են ի թիւս միւսների մի քանի հետաքրքրական հարցեր, օրինակ՝ ձայնաւոր Էլիավային ձայնաւորների կազմից հեռացնելու, քաղաքի եկամտի և ծախսերի նախահաշւի, սանիտարական դրութեան մասին և այլն։

◆ Այսօրվանից սկսվում են ներկայացումները բոլոր թատրոններում։

◆ Թիֆլիսի էլեկտրաքարշի վարչութիւնը գալիք տարվանից մտադիր է դադարեցնել ձրի տոմսակներ տալը բոլորին, բացի քաղաքային վարչութիւնից, որի հետ, ինչպէս յայտնի է, կապված է որոշ պայմանագրերով։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Ստացվել է Մնացական Խունունցի միջոցով ի յիշատակ հանգուցեալ ամուսիններ Աննա և Աւետիս Ղուկասեանների յօգուտ ընկ. միջոցներով պահվող դպրոցների 200 ր.»։

◆ Ծննդեան տօների առիթով քաղաքային դպրոցների աշակերտների համար ժողովրդական տանը կը տրվեն ներկայացումներ երեք լեզուներով՝ հայերէն, ռուսերէն և վրացերէն։

◆ Այսօր Թիֆլիսի հասարակական կլուբում Ն. Երմօլայեվը ռեֆերատ կը կարդայ «Вѣхи» ժողովածուի մասին, որից յետոյ տեղի կունենայ մտքերի փոխանակութիւն։

◆ Վակէ կոչված քաղաքամասի բնակիչները խնդրամատոյց են եղել, որ իրանց մօտ ևս էլեկտրաքարշի գիծ կառուցվի։

◆ Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ տօներին ահագին քանակութեամբ կեղծված մեղր է վաճառվում շուկաներում, այդ բանի առաջն առնելու նպատակով քաղաքային տնտեսական մասնաժողովը պատրաստել է տուել երկու տեսակ ցուցակներ, որոնք մեղրավաճառները պարտաւորապէս կպցրած են ունենալու իրանց ապրանքի ճակատին. մէկը «իսկական մեղր» խորագրով, իսկ միւսը «շաքարի սիրօպ»։ Մեր խորհուրդն այն կը լինի, որ անարատ մեղր ձեռք բերելու համար աւելի լաւ է դիմել Կովկ. Գիւղատնտ. Ընկերութեանը կից գտնվող մեղուաբուծական բաժանմունքին, ուր արդէն վաճառքի է հանված անարատ մեղր։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Ռուս օրաթերթում պակասում չը կայ գրական ինտերվիւերներից։ Նորերս Լ. Ն. Տօլստոյի ընտանիքը յայտնեց, որ թերթերից մէկում տպագրած իբր տեսակցութիւն-խօսակցութիւնը Լ. Տօլստոյի հետ չեղած բան է։ Մի ուրիշ ինտերվիւեոր «Утро Р.»-ում տալիս է Ն. Ն. Զլատովրատսկիի հետ տեսակցութեան հաշիւը, որի մէջ ռուս գրականութեան պատմութեան հետ ծանօթը չի գտնի որևէ նոր փաստ, բացի նրանից, որ «Устои» ընկերական ամսագիրը տգէտ ինտերվիւեորը դարձրել է «Рус. Богат.»։ Բայց վաղուց է առհասարակ նկատվել «աշխոյժ» լրագրողների անփութութիւնը դէպի իդէաները, փաստերը, գրականութիւնը։

◆ Մոսկվայի համալսարանը նորերս ստացել է երեք գնահատելի նուիրաբերութիւններ. ակադեմիկոս և Մոսկվայի նախկին պրօֆէսոր Ի. Ի. Եանժուլը նուիրաբերել է 8000, իսկ Ա. Զոտովը՝ 4000 գիրք քաղաքատնտեսական բովանդակութեամբ։ Նախկին գործարանային տեսուչ, յայտնի բժ. Ա. Վ. Պօգօժևը նուիրաբերել է մի նշանաւոր հաւաքածու, գրքեր և այլ առարկաներ, որոնք պիտի կազմեն սօցիալական թանգարան՝ իրաւաբանական բաժանմունքին կից։

◆ Պետական Դումայի անդամները տօներին արդէն ցրվում են։ Շատերը նրանցից գնում են Րիվիէրա։ Աջէմեանը գալիս է Թիֆլիս։ Սիբիրի պատգամաւորները մնում են Պետերբուրգում։ («Б. В.»)

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնական Գեօրգիևսկի քննութեան ենթարկեց Խարկովի միջնակարգ դպրոցները։ («Г. М.»)

◆ Ուսումնական շրջանի հոգաբարձուին և Պետերբուրգից ուղարկված պաշտօնեան յանկարծակի սկսեցին քննութեան ենթարկել Մոսկվայի համալսարանի գործերը։ Այսպիսի քննութիւն կատարվել է 1894 թւին։ («Г. М.»)

◆ Դեկտեմբերի 20-ին Պետերբուրգի ոստիկանութիւնը ձեռն ու ոտ էր ընկել տելէֆօնով իրան հաղորդված այն տեղեկութիւնից, թէ «Էրմիտաժ» հիւրանոցում անձնասպանութիւն գործեց Պետական Դումայի անդամ Պուրիշկևիչը։ Անյապաղ հիւրանոց գնացին ոստիկանները։ Բանից դուրս եկաւ, որ ոչ մի անձնասպանութիւն չէ եղել։ Ոստիկանութեանը խաբել էր մի հանաքչի։ («Г. М.»)

◆ «Нов. Вр.» լրագրին հեռագրում են Թիֆլիսից. «Գնդապետ Կարպովին սպանողը, Միխայիլ Վօսկրէսէնսկի ազգանունով, 1904 և 1907 թւերին ծառայում էր Թիֆլիսում կովկասեան 3-դ հրացանաձիգների բատալիոնում որպէս հասարակ զինուոր, հսկողութեան ներքոյ էր, իրան անուանում էր Մոսկվայի համալսարանի նախկին ուսանող-բժիշկ և յայտնի էր «Պօլօվինչ» մականունով։ Սերտ յարաբերութիւններ ունէր կամաւորապէս զինուորական ծառայութիւն մտած վրացիների հետ»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Կրասնովոդսկ, 20 դեկտեմբերի

Դերասան Թաղանեանի և տեղիս սիրողների մասնակցութեամբ հասարակական կլուբում խաղացվեցին Ազեանի «Խաբված յոյսեր» պիէսան և Արման Րօզօյի «Մկնիկ» վօդևիլը։ Առաջինը անցաւ բաւականին աջող։ Զուտ արդիւնք մնաց 98 ր., որից 46 ր. յօգուտ տեղիս ծխ. դպրոցի, իսկ մնացածը Թաղանեանին։

Դիտող

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Փօթի, 14 դեկտեմբերի

Փօթիի հայոց եկեղեցու շինութեան հոգաբարձութիւնը ի սրտէ իր խորին շնորհակալութիւնն է յայտնում Հայկանուշ Գրիգորեան Մարտիրոսեանցին նրա նուիրաբերած 50 ր. համար։

Ներկայ կրիտիկական միջոցում, երբ եկեղեցու շինութիւնը հասցված է մինչև ծածկոցը, փող չը լինելու պատճառով դադարեցված է և շինված պատերը անձրևների պատճառով վտանգի ենթարկված, ամեն մի նուիրաբերութիւն ունենում է աւելի մեծ նշանակութիւն, և հոգաբարձութիւնս խորապէս շնորհակալ կը լինի այն անձանց, որոնք օգնութեան կը հասնեն նրան։

Նախագահ՝ Ա. Ապրէլեան
Քարտուղար՝ Ա. Թիւրքեան

—

Մերվ, 12 դեկտ.

Այսօր ինձ մօտ մտաւ շրջակայքիս Թախտա-Բազար անուանեալ գաղութից եկած մի պարոն և սաստիկ գանգատվեց, թէ անցեալ տարի նոյն գաղութում տեղական երիտասարդ-սիրողները բարեգործական նպատակով տուել են մի երեկոյթ-ներկայացում, որից ստացվել է արդիւնք 53 ր. 50 կ., բայց այդ գումարը չէ ծառայել իր նպատակին, այլ իւրացրել են իրանք ներկայացում կազմակերպողները։ Սրանով խնդրվում է վերոյիշեալ պարոններին հրապարակով պարզել ներկայացումից ստացված 53 ր. 50 կ. ուր լինելը և վերցնել իրանցից իրանց վրա դրված անհաճելի մեղադրանքը։

Մանասէ

—

Արլաճ գիւղ (Գանձակի գաւ.), 13 դեկտ.

Մեր ծխական ուսումնարանը, որ դեռ ներքին պակասութիւնները լրացնելու համար մօտ 100 ր. կարիք էր զգում, աջակցութեամբ բժ. Վ. Աղիբէգեանի և ուսուցիչ Բ. Պ-ի, այդ պակասութիւնները ուրախութեամբ յանձն առաւ և լրացրեց մեր հայրենակից Մանուէլ Մալեանը իր հանգուցեալ եղբայր Յարութիւնի յիշատակը յաւերժացնելու համար։ Այս առիթով Արլաճի հասարակութիւնը հրապարակօրէն յայտնում է իր խորին շնորհակալութիւնը Մալեանին, և հրաւիրում մեր միւս հայրենակիցների ուշադրութիւնը, որոնք ապրում են զանազան քաղաքներում, հետևել Մանուէլ Մալեանի օրինակին և աջակցել իրան՝ ուսումնարանի համար սեփական շինութիւն կառուցանելու, որը սկսվելու է այս առաջիկայ գարունքից։

Ի դիմաց Արլաճի հասարակութեան՝
Ս. Բարխեեանց

ԿԱՐԴԱՑԷ՞Ն ԻՐԱՆՑ...

Բագու, 19 դեկտեմբերի

Երկու ամիս առաջ «Մշակի» մէջ, կարծեմ Կարսի շրջանից, մի լուր տպագրվեց այնտեղ երևցած մի ինչ-որ թռուցիկի մասին, որը, ինչպէս լրատուն էր ասում, վերաբերում էր հանգուցեալ Ե. Թոփչեանի սպանութեան դէպքին։

Այդ լուրին և թռուցիկին, ըստ երևոյթին, գիտակից շրջաններում այնքան էլ նշանակութիւն չը տուին, և շատերը այնպէս կարծեցին, որ մի խումբ մութ անձնաւորութիւնների արարք է այդ։

Սակայն, այսօր, «Մշակի» 279-դ համարում կարդում ենք Էնզէլիից մի նամակ, որը պարզում է, որ այդ թռուցիկը արտատպված է Կ. Պօլսի «Ազատամարտ» լրագրի № 123-ում և թռուցիկի ճակատը կրում «Հ. Յ. Դաշնակցութիւն» անունը։ Կարսի շրջանից հաղորդված լուրը և Էնզէլիից գրված նամակը մի բովանդակութիւն ունեն։

Թէ որքան անպատկառութիւն, գրական լրբութիւն է տիրում այդ «Թռուցիկի» հեղինակների անբարոյականացած ուղեղի մէջ, այդ մասին ես լռում եմ, բայց անկարելի է լռելեայն անցնել այն, որ «Թռուցիկի» մէջ այնպիսի մարդկանց անուններ են տալիս, որոնք երկրագնդի հայ մամուլին և մասամբ օտարներին յայտնի են որպէս ազնիւ, անաչառ հասարակական գործիչներ և որոնք, այս բոլէին էլ, իրանց գրչով տասնեակ հազարաւոր թիւրքահայ որբերի արտասուք են սրբում։

Չենք հաւատում, որ Ալ. Քալանթար և Հ. Առաքելեան անուններ անծանօթ լինեն թիւրքահայերին, մանաւանդ նրանց գիտակից դասին—խմբագիրներին, հրատարակիչներին և հասարակական ու ազգային էֆէնդի գործիչներին։ Եւ «Ազատամարտ» նման թերթեր 1905 թւից յետոյ ռուսահայերս շատ տեսանք, տասնեակներով սունկի պէս բուսան, որոնց այսօր հետը չը կայ, միայն նշմարվում է, ետևներից թողած սև գիծը, որից սոսկում է ռուսահայը, շուտով կը սարսափէ և թիւրքահայը։ Իսկ Քալանթարներ, Առաքելեաններ և այլք պատւով կը մնան իրանց «Մշակներով»։

Սակայն մեր ասելիքը այդ չէ, այլ այն, որ արդեօք Հ. Յ. Դաշնակցութիւնը կարդացե՞լ իրան, որ այդ թռուցիկը մի շանտաժ է, զրպարտութիւն է, որի հեղինակները շահագործել են կուսակցութեան անունը...

Այդ է մեզ հետաքրքրում և այդ երևոյթը կապ ունի Դաշնակցութեան դեռ չը չքացած անուան հետ։

Եթէ, մեր համեստ կարծիքով, Դաշնակցութիւնը չը հերքէ այդ թռուցիկի բովանդակութեան զրպարտիչ լինելը, առանց [illegible] լինելու պիտի ասել, որ մինչև այսօր և այսուհետև Թիւրքիայում կատարուած ու կատարվելիք սպանութիւնները պիտի փաթաթվեն Թիւրքահայ լուրջ և անկաշառ գործիչների վզին, որոնք ուղղութիւնով համերաշխ չեն Դաշնակցութիւն կոչված կուսակցութեան գործելակերպին։

Փաստը ակներև է, ապացոյցը պերճախօս և պարզ. և որպէսզի վաղը Թիւրքահայ անարատ գործիչները ևս չարժանանան անամօթ զրպարտիչ անուան, ցանկալի է, որ մեզանից դաս վերցնեն և առանց զոհերի սանձահարեն ինքնակոչներին...

Սպասենք և տեսնենք։ Ս. Գարագաշ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 14 դեկտեմբերի

Վերջապէս պաշտօնանկ եղաւ Թաւրիզի քարգուզարը և հեռացաւ քաղաքից, շնորհիւ ռուսաց հիւպատոսի, որ շատ դժգոհ էր յիշեալ պաշտօնեայի վատ գործելակերպից։ Դժգոհ էին բոլոր օտար տարրերը, ինչպէս նաև Թեմակալ Կարապետ եպիսկոպոսը։ Հերիք չէ, որ Թեմակալի դիմումներին՝ այս ու այն հարցի մասին, բաւարարութիւն չէր տալիս, այլև հարց էր շինել, որ առաջնորդը իրաւունք չունի քաղաքական գործերին միջամտելու. Նրա գործը սոսկ կրօնականն է. վարակված լինելով անտարակոյս հարեան մահմէդական պետութեան ձեռք առած ուղղութիւնից՝ Թեմակալ Կարապետ եպ. դիմեց իր ժամանակին քարգուզարի յայտնի արարքի մասին գեներալ-նահանգապետ Մուխբիր-ուս-Սալթանէին բողոքով, սակայն նահանգապետը խոստացաւ գրել Թէհրան և այնտեղից ուզել հարկաւոր հրահանգ և կարգադրութիւն։ Թէպէտ և Թեմակալը մտածում էր անձամբ դիմել բարձրագոյն իշխանութեան և քարգուզարի ընթացքի համար բողոքել, այնուամենայնիւ այդ միտքը առ այժմ կանխակալ համարվեց սրբազանի կողմից և դիմումը թողնվեց նահանգապետին՝ յետագային պատահած անակնկալների դէպքում բաց դուռ ունենալու հայեցակէտով։

Պարսկաստանի հայոց առաջնորդ-հոգևորականների քաղաքային գործերին միջամտելու խնդիրը վաղ թէ ուշ կարող է երևան գալ՝ մանաւանդ Պարսկաստանի այսօրվայ անկարգ ու անկազմակերպ օրերում, որ շատ հաճելի բան չէ, ուստի մեր գործերի գլուխն եղող իշխանաւորների, առաւելապէս Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդ Սահակ եպ. Այվատեանի, պարտականութիւնն է շրջահայեաց և պատրաստ լինել պաշտպանելու պարսկահայ համայնքի իրաւունքները՝ ապագայ պատահականութիւնների հանդէպ։

Մենք այլ կերպ կը մտածէինք, եթէ Պարսկաստանը այն ցանկալի օրերին հասնէր, երբ ազատ քաղաքացու իրաւունքները իրանց կոչման վրա կանգնած տեսնէինք. մինչ այդ՝ Պարսկաստանի այլադաւան և այլակրօն բաղկացուցիչ ազգութիւնները, նրանց շարքին և հայ ազգաբնակութիւնը, պէտք է ամուր պահպանեն դարաւոր իրաւունքները։

Պարսկաստանի անցեալով ու ներկայով հետաքրքրվող անձանց ծանօթ չը պէտք է լինի քարգուզարների գոյութեան պատճառները և այդ պաշտօնէութեան բնաւորութիւնը։ Քարգուզարները Պարսկաստանի արտաքին գործերի մինիստրութեան ներկայացուցիչներն են, որոնք օտար դիւանագիտական մարմինների և ոչ-մահմէդական տարրերի ու կառավարութեան միջև յարաբերութեան պաշտօնեաներ են, և վերջիններս աւելի ու աւելի պարազիտների դերումն են եղել և սրա ու նրա մարմնից տզրուկի պէս արիւն ծծել, քան թէ մի օգուտ հասցնել։ Պարլամենտական Պարսկաստանում սրանց գործը վերջացած պէտք է համարել և ընդմիշտ ջնջել յիշեալ պաշտօնէութիւնը իբրև աւելորդ և անպէտք բան։

Գեներալ-նահանգապետը դեռ մինչև այսօր պաշտօնական այցելութիւն չէր կատարել ռուսաց զինուորական մեծ պաշտօնականներին. և այս հանգամանքը մի կերպ սառը յարաբերութեան էր դատապարտել երկու կողմերը։ Երկու օր առաջ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի մահվան առիթով, ըստ որում հանգուցեալն էր այն զօրագնդերի շէֆը, որոնց պատկանում է նաև Թաւրիզում եղող զօրաբաժինը, Մուխբիր-ուս-Սալթանէն այցելեց Բաղը-Շումալ՝ զօրամասի օֆիցերներին և փոխադարձաբար ընդունեց պաշտօնականների փոխ-այցելութիւնը, որով երկուստեք յարաբերութիւնները սերտ բարեկամական բնաւորութիւն ստացան։ Հայկազուն

ԲԵԼԳԻԱԿԱՆ ՆՈՐ ԹԱԳԱՒՈՐԻ ՃԱՌԸ

Արտասահմանեան լրագիրները բերում են Ալբերտ թագաւորի ճառի բնագիրը, որ նա ասել է սահմանադրութեանը հաւատարիմ մնալու երդումն տալուց յետոյ։ Ալբերտ թագաւորն սկսեց նրանից, որ շեշտեց իր նախորդների՝ Լէօպոլդ I-ի և Լէօպոլդ II-ի մատուցած ծառայութիւնները երկրի քաղաքական զարգացման և տնտեսական առաջադիմութեան գործում։ Իր ճառի երկրորդ մասում, որը ամենամեծ հետաքրքրութիւն ունի, նա շօշափեց ներկայ մօմենտը և բացատրեց, թէ նա ինչպէս է հասկանում թագաւորի նշանակութիւնը։

«Մեզ հարկաւոր է,—ասաց նա,—երկարաձգել փայլուն դարաշրջանը, ներշնչվելով այն սկզբունքներով և գաղափարներով, որոնք դարձել են այժմ բելգիական աւանդութիւն. դա անյողդողդ հաւատարմութիւնն է դէպի մեր բոլոր սահմանադրական ազատութիւնները, սէրը դէպի մեր անկախութիւնը, իմաստութիւնը և տակտը հասարակական գործեր վարելիս։ Բելգիական ժողովուրդը անձեռնմխելի կը պահէ իր սրբազան ժառանգութիւնը, որ ստեղծվել է այնքան սերունդների աշխատանքով, և կը շարունակէ իր ճանապարհը դէպի աշխատանքի և գիտութեան խաղաղ նուաճումները այն ժամանակ, երբ Ֆլանդրիայի և Վալէնսիայի արտիստները և նկարիչները կը սփռեն այդ ճանապարհը իրանց գլուխ-գործոցներով։ Ազգը հէնց նոր ստացաւ գերիշխանութիւն Կոնգօյի հողերի վրա։ Գիտակցելով իր պարտաւորութիւնները, հաստատ որոշմամբ նա գծագրել է իր այն գաղթային քաղաքականութեան գիծը, որին նա դիտաւորութիւն ունի հետևել։ Դա մարդասիրութեան և առաջադիմութեան քաղաքականութիւնն է։ Արդարութեան զգացմունքով ներշնչված ժողովրդի համար գաղութային միսսիան կարող է լինել միայն բարձր քաղաքակրթութեան միսսիա։ Յանձն առնելով այդ միսսիան, փոքրիկ երկիրը իրան մեծ է ցոյց տալիս։ Բէլգիան կառավարվում է հիմնարկութիւններով, որոնց սկզբունքը փոխ են առել և այլ պետութիւնները։ Բէլգիան միշտ կատարել է իր խոստումները, և եթէ նա այժմ պարտաւորութիւն է յանձն առնում իրան արժանի պրօգրամ անցկացնել Կոնգօյում, ոչ ոք իրաւունք չունի կասկածով վերաբերվելու նրա խօսքին։ Ես որոշ հայեացք ունեմ իմ գործի վրա։ Սուվերէնը իր կատարեալ օրինականութեամբ պէտք է կուսակցութիւններից բարձր կանգնի։ Նա պարտաւոր է անխոնջ ուշադիր լինել դէպի երկրի ձայնը, պէտք է պաշտպանէ երկրի բոլոր կենդանի ոյժերը և հոգածութեամբ վերաբերվի դէպի թշուառների վիճակը։ Սուվերէնը պէտք է լինի իրաւունքի ծառայ և սօցիալական խաղաղութեան պահապան։ Թող Աստուած օգնէ ինձ կատարելու իմ միսսիան։ Ինչ վերաբերում է ինձ, ես միշտ պատրաստ եմ խրախուսելու նրանց բոլորի ջանքերը, որոնք իրանց աշխատանքով աջակցում են երկրի փառքին, բոլոր նրանց, որոնք ներշնչված համաձայնութեան և հասարակական պարտաւորութեան ոգով բարձրացնում են ազգի մտաւոր և բարոյական մակերևոյթը, տարածում են կրթութիւն և ուսում և տալիս են մասսաներին մեծ բարօրութիւն»։

Վերջում թագաւորը խոստացաւ իր բոլոր ոյժերը նուիրել հայրենիքի ծառայութեանը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9\frac{1}{2}$—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու. վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ,

Ա. Մ. ՓՈՒԴԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հիւ.։

Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—$1\frac{1}{2}$—2 ժ. ներքին և երեխայոց հ.

Յ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ—ատամնաբոյժ—$8\frac{1}{2}$—$11\frac{1}{2}$ ժ., պլոմբներ և արհեստական ատամներ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—$6\frac{1}{2}$ ժ մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող № 8
(օ. մ.) 783. 100—64

Բ Ժ Ի Շ Կ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։
Կոճնիեվսկայա փ., № 6, «Վէացել» հիւրանոցի մօտ։ (ե.հ.շ.) 955. 100—39

Բ Ժ Ի Շ Կ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. $12\frac{1}{2}$—2.
(երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—$12\frac{1}{2}$.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(ա. օ.) 1044. 100—57

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր | առաւօտեան 9—12 ժ.
| երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—51

Բ Ժ Ի Շ Կ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 5—7 ժ. երեկ.
Միքայէլեան փող., № 36. Տելէֆօն № 388.
(օ. մ.) 1216. 100—52

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԵԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Յ. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (спринцов.), վէրքի փաթաթումներ, դեղերի քսումներ (втиранiе) և այլն։ Ելեկտրականութիւն ռէվմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ ելեկտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկների։ Խորհուրդը 50 կոպ.։ Ընդունելութիւնը 3—4 ժամը։ Семеновская ул., № 9, Վորոնցովի կամուրջին մօտ։
(օ. մ.) 857. 0—42

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Մշակի» խմբագրութեան մէջ յօգուտ Ադանայի աղէտեալների և հայ որբերի
ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

1) «ՀԱՅԻ ԿՏՈՐ ԶԵՅԹՈՒՆՑՈՒՆ»
Գրական ժողովածու, հրատ. Գր. Ջալխուշեանի, գինն է ամենապակասը 3 ր.։

2) «ԳՈՒՆԱՒՈՐ ՄԵԾԱԴԻՐ Ց—
—Յ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ
Եապօնական կեանքից, նուիրված Նիկոլսկ քաղաքի հայ լուսանկարիչ Սմբ. Բուդաղեանի կողմից, իւրաքանչիւրը 30 կ. (փոխարէն 60 կոպէկի)։

Այն անձինք, որոնք կամենում են օգնութիւն հասցնել աղէտեալ ադանացիներին, բարի և օգտակար գործ կատարած կը լինեն՝ գնելով այդ գրքերից ու լուսանկարներից բազմաթիւ օրինակներ և նուիրելով ազգային զանազան հաստատութիւնների, ուսումնարանների ու գրադարանների՝ թէ Ռուսաստանում, թէ Պարսկաստանում և թէ Թիւրքիայում։
(օ. մ.) 1352. 10—4

Նորութիւն 3 ր. 25 կ.

Կանանց համար ձմերային պատրաստի շրջազգեստ՝ բրդէ գեղեցիկ և նորագոյն տրիկօյից, վերջին տարազով կարված, կոճակներով և մետաքսէ թելերով զարդարված, ամեն տեսակ մուգ գոյների. ուղարկվում է պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ., հաշւելով ճանապարհածախսը 55 կ.։ Երեք շրջազգեստ պահանջելուց՝ ճանապարհածախսը մեր հաշւին։ ԱՌԱՆՑ ՌԻՍԿԻ. եթէ չը հաւանվի՝ փողը վերադարձնում ենք։ Նոյն տեսակ շրջազգեստ ամենալաւ կտորից և գեղեցիկ արդուզարդով—3 ր. 90 կ.։ Խնդրում ենք ուղարկել երկարութեան և գօտու լայնութեան չափը՝ սանտիմետրով կամ թէ որևէ թելով։ Սիբիր հաշւվում է 80 կ. աւելի։ Հասցէն՝ Фабрика А. КИВМАНА, ЛОДЗЬ № 43.
Թղթակցութիւնները ռուսերէն կամ գերմաներէն։
(շ.) (B. 79524) 1370. 2—1

ՀՕՆՕՐՐԷԻ (ՏՐԻՊՊԷՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO—ՊԻՉԻԼԻՆ"
Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։
Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող դեպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ բորբոքը:
ՊԱՀԵՍՏԸ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախսը պօստային սակագնով։
Գտնվում է Կովկ. Ընկ. դեղային ապրանքների վաճառանոցում։
(շ.) (П. 124817) 540. 0—15

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ
ՖՐԱՆՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ
Գուիտօն Լուսինեանի

Հայ ազգին պատուաբեր մի հսկայական գործ, 30 տարվայ անդուլ աշխատանքի պսակ, բաղկացած 2000 մեծադիր երեսներից, 3 սիւնակների վրա, 1000-ից աւելի պատկերով զարդարված, որը կարող է փոխարինել հանրագիտական ընտիր բառարանի։ Պարունակում է իր մէջ բուսական, կենդանաբանական, բժշկական, քիմիական, երկրաբանական և գիտութեան վերաբերեալ բոլոր ճիւղերի տերմինների և հասարակ բառերի բացատրութիւններ, վերածված հարազատ հայերէնի, մանաւանդ ֆրանսերէն ոճերի և ընտիր դարձուածքների վերաբերեալ։

Այս հսկայական աշխատութեան առաջին տպագրութիւնը կարճ ժամանակի մէջ սպառված լինելով, արդէն հրատարակիչը ձեռնարկել է երկրորդ տպագրութեան կ. Պօլսում և մօտ ժամանակի ընթացքում լոյս է տեսել գրքի մի-երրորդ մասը և առանձին պրակներով ուղարկվում է բաժանորդներին, իսկ մնացեալները հետզհետէ տպագրվում և 3 ամսից բոլորովին կաւարտվեն։ Բառարանի ամբողջ տպագրութիւնը արտասահմանում կաղապարված լինելով, այլևս կարիք չը կայ շարելու կամ սրբագրելու. քանի որ այդ մեծ աշխատանքի նեղութիւնը վերացած է, մնում է միմիայն տպագրութիւնը, որ կատարվում է խիստ արագութեամբ։

Բացված է բաժանորդագրութիւնը Թիֆլիսում հետևեալ հասցէներով.

Թիֆլիս, Յարութիւն Քրիստափորեանին, Մադատովսկայա փ., տ. Մարտիրոսեանի, № 7, նաև «Կենտրոնական» գրավաճառանոցում։

Բաժանորդ գրվել ցանկացողը պէտք է շտապէ, ապա թէ ոչ տպագրութիւնը վերջանալու մօտ գինը պիտի բարձրանայ։ Բաժանորդագինն է՝ Թիֆլիսի համար 8 ր. 80 կ., իսկ Թիֆլիսից դուրս, ճանապարհածախսով, 10 ռուբլի։
(շ.) 1329. 5—3

Լոյս տեսաւ
ԳՐԱԴԱՐԱՆ «ԾԻԱԾԱՆ» № 2.
Մարգար
ԳՈՂԸ
(Ջինուրի յիշատակարանից)
ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.
Դիմել Թիֆլիսի և Բագուի գրավաճառներին։
Պահեստ՝ Բագու, «Ծիածանի» նախագահ Գ. Պապեանի մօտ այս հասցէով Малая-Морская ул., Русско-Армянская школа.
(կ.ե.հ.շ.) 1368. 5—4

Բ Ա Ց Վ Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
1910 Թ.
„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ"
(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)
Գրական, քաղաքական, հասարակական եւ առեւտրա-արդիւնաբերական
ԼՐԱԳԻՐ
Լոյս է տեսնում առժամանակ
ՇԱԲԱԹԸ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ
Չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը
Մոտիկ աշխատակցութեամբ Ղ. ԱՂԱՅԵԱՆԻ և ՆԱՐ-ԴՈՍԻ
«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» բաժանորդները կարող են ստանալ «ԽԱԹԱԲԱԼԱ» երգիծաբանական շաբաթաթերթը պակաս վճարով։
ԲԱԺՆԵՎՃԱՐՆ Է

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ (Առանձին)		ԽԱԹԱԲԱԼԱ (Առանձին)	
Տարեկան	7 —	Տարեկան Թիֆլիսում 4 ր., դուրսը	5 ր.։
Կէս տարին	4 —	Կէս տ. » 2 ր., »	3 ր.։
Երեք ամիսը	2 25	3 ամս. Թիֆլիսում և դուրսը	1 ր. 50 կ.։
Մէկ ամիսը	— 75	Մէկ ամիսը	— 50 կ.։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ և ԽԱԹԱԲԱԼԱ
(Միասին)

Տարեկան	10 — —	Երեք ամիսը	3 — 50
Կէս տարին	6 — —	Մէկ ամիսը	1 — 20

«Սուրհանդակում» յայտարարութիւնների համար վճարում են տողին՝ առաջին երեսի վրա—10 կոպէկ, վերջին երեսի վրա—5 կոպէկ։
Հատով («Սուրհանդակի») համարն արժէ ամեն տեղ 5 կոպէկ։
Հասցէն Ռուսաստանի համար՝ Тифлисъ, редакція газ. „Сурандакъ". Արտասահմանի համար՝ Tiflis, Rédaction du journal „Sourhandak".
Հրատարակիչ՝ Գեորգ Ջիլինգարեան Խմբագիր-հրատ. Աւս. Եռիցեան
(ա. օ.) 1348. 10—7

ՃՔԵՂ! ԱՄՈՒՐ!
ԿՕՇԿԵՂԷՆ
Ս.-Պետերբուրգի Մեխանիկական
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Իսկականը միայն այս դրոշմով
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ
ՆՈՅՆՊԷՍ ԵՒ ԿՐԷՄ ԵՒ ԱՊՐԷՏՈՒՐԱ
ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ ԼԱՒ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ
Մեծաքանակ վաճառքը կատարում է
ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
„ТРЕУГОЛЬНИКЪ" ՖԻՐՄԱՅՈՎ
182. 0—36



ԴԵՂԱՀԱՏՆԵՐ
CASCARA MIDY
Ֆրանսիական ժողովրդական միջոց
ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒԹԵԱՆ դէմ։
Ընդունելութեան չափը. 2 ԴԵՂԱՀԱՏ ՆԵՐԿՈՆԵՐԸ, ՊԱՌԿԵԼՈՒՑ ԱՌԱՋ.
Cascara Midy-ն (Կասկարա Միդի) չէ առաջացնում որովայնի մէջ ցաւեր, ոչ էլ հեղ և փորլուծութիւն։
Դեղավաճառանոց MIDY, 140, faubourg St. Honoré, Парижъ. Ռուսաստանի գլխաւոր դեղավաճառանոցներում։
(6, 16, 26) (M. 305088) 1050. 0—9

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская № 3.